ԲԵՆԻԱՄԻՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի թեմատիկ խմբի ղեկավար, տ.գ.դ. պրոֆեսոր
ԱՐՏԱՎԱԶԴ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, տ.գ.թ. դոցենտ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՇՈՒՐՋ

Տնտեսական քաղաքականության երևույթն ինքնին բացառիկ է:

Քաղաքականությունն ու տնտեսությունը անբաժան են մարդկության պատմությունից: Իրենց փոխկապակցվածության մեջ դրանք քաղաքակրթության ուղեկիցներն են:

Հասարակության համատեղ ապրելակերպը ընթանում է հակասական զարգացումներով: Հասարակությունը բաժանվում է տարբեր փոքր և մեծ խմբերի, սոցիալական կլաստերների կամ դասակարգերի, որոնք յուրովի են իրենց աշխարհայացքներում, ապագայի նկատմամբ ակնկալումներով ու գնահատականներով, իրենց հետաքրքրություններով և ռեսուրսների բաժանման մոտեցումներով: Արդյունքում, առաջանում են հակասություններ, որոնց խաղաղ և ընդհանուր հետաքրքրությունները բավարարող լուծումները, հետևելն ու համաձայնվելը դառնում է անհրաժեշտություն: Վերջինս հանգեցնում է կարգավորման պարադիգմային՝ տնտեսական քաղաքականության մշակմանն ու կիրառմանը:

Տնտեսական քաղաքականության վերաբերյալ սահմանումներն ու մոտեցումները բազմաթիվ են:

18-19-րդ դարերում դասական տնտեսագետների կողմից «տնտեսական քաղաքականությունը» ընկալվում էր ազգային տնտեսության տեսակետից և անվանվում քաղաքական տնտեսագիտություն (Political Economy): Նույնիսկ անգլիական դասական տնտեսագետներ Ադամ Սմիթը, Դավիդ Ռիկարդոն, Ջոն Միլը, Ուլյամ Ջեվոնսը և ուրիշներ, այս բառակապակցությունը օգտագործում են որպես իրենց աշխատությունների վերնագրեր:

Ի տարբերություն անգլիացիների՝ գերմանական տնտեսագետների մոտ նկատելի է քաղաքական տնտեսագիտության փաստացի օբյեկտի՝ մեկ ազգի բարեկեցության էության ուսումնասիրումը:

Դասական տնտեսագիտությունից տնտեսական քաղաքականության անցման առաջին մոտեցումը վերագրվում է Կարլ Մարքսին, որը փորձում է տնտեսագիտության հիմնական հարցի՝ հասարակության բարեկեցության բարձրացումը քննարկել և դրա լուծումը գտնել քաղաքական հեղափոխական հեղաշրջումների կիրառմամբ[1]:

Վերջին հարյուրամյակում, հատկապես տնտեսական, քաղաքական ճգնաժամերի «ազդեցությամբ» քաղաքական տնտեսագիտությունը վերածվում է «նոր քաղաքատնտեսության»: Քաղաքականության տնտեսական տեսանկյունը ստանում է գործիքային և ընդհանուր հիմնախնդրի մի հատվածի բնութագրման նշանակություն:

1960-ականների սկզբին եվրոպական և հատկապես գերմանական տնտեսագիտական գրականությունում և հետազոտություններում նախ հստակեցվում են քաղաքականությունն ու տնտեսությունը և այնուհետև տրվում դրա ինտեգրալային ձևակերպումը[2]:

Այսպես. «Քաղաքականությունը հասարակության բոլոր անդամների կողմից բախումների միավորված կարգավորումն է»[3]:

Հետաքրքրական է Մաքս Վեբերի մոտեցումը՝ ինչ ենք հասկանում քաղաքականություն ասելով: Մեծ գիտնականը գտնում է, որ դա լայն հասկացություն է, որն ընդգրկում է ինքնուրույն ղեկավարման, գործունեության բոլոր ձևերը: Ներկայացնելով կառավարման, պետության կամ քաղաքական ուժի ազդեցության իր մոտեցումները՝ նա սահմանում է. «Քաղաքականությունը ձգտումն է դեպի իշխանության մասնակցությունը կամ դրա բաշխման վրա ազդեցությունը՝ լինի դա երկրների միջև, թե երկրի ներսում, թե մարդկային խմբերի միջև»[4]:

Բնական է, որ ձևակերպումը առաջ է բերում երեք հիմնահարցեր.

- Ո՞վ պետք է կարգավորի հասարակության մեջ առաջացած հակասությունները: Ակնհայտ է, որ հակասություն կարգավորողը պետք է ունենա քաղաքական իշխանություն և հիմնարար հարց է. ինչպե՞ս պետք է տրվի իշխանությունը:
- Ինչպե՞ս պետք է իրականացվի այդ իշխանությունը: Կարևորվում է բոլորի կողմից «խաղի կանոններին» հետևելը:
- Ինչպե՞ս պետք է վերահսկվի այդ իշխանությունը:

Ահա այս երեք կարևորագույն հարցերի պատասխանը հանգեցնում է ընդհանուր համակարգի քաղաքական կառավարման հայեցակարգի ձևավորման անհրաժեշտությանը: Մնում է տնտեսագիտության հասկացությունը:

Այսպես. տնտեսագիտությունը սահմանափակ ռեսուրսների պայմաններում ապրանքների և ծառայությունների արտադրությունն է և վերաբաշխումը:

---

[1] Ramb. B-T. Grundlagen der Wirtschaftspolitik. Munchen. 1987. s.1-11.

[2] Տես. Giersch .H., Allgemeine Wirtschaftspolitik: Grundlagen, Wisbaden, 1961. Eucken W. Grundsatze der Wirtschaftspolitik. Tubingen. 1968., Kirschen E. International vergleicende Wirtschaftspolitik-Versuch eine empirische Grundlegung. berlin 1967. Korner H. Theoretische Grundlagen der Wirtschaftspolitik. Koeln. 1977.

[3] Bohling W., Masberg D. Lexikon Wirtschaftspolitik. Die Institutionen, Munchen 1986. Rohe K. Art. „Politikbegriffe„ in: Mickel W. in Vernbindung mit Yitylaff, D. handlexikon der Politikwissenschaft, Munchen 1983.. Hermann A.,Wirtschaftspolitik und Regierungssystem der Bundesrepublik Deutschland : eine Einfhrung:-Opladen: Leske + Budrich, 1995. Weimann J. Wirtschaftpolitik: Allokation und kollektiv Entscheidungen, Springer 1996.

[4] Макс Вебер. Политика как призвание и профессия. http://ru.wikipedia.org/wiki.

Ավանդաբար այն ընդգրկում է երեք հիմնահարցեր.

- կոորդինացման՝ ինչ պետք է արտադրվի,
- կազմակերպչական՝ ինչպես արտադրվի,
- բաշխման՝ ինչպես վերաբաշխվեն ապրանքներն ու ծառայությունները:

Նշված հիմնահարցերը հասարակության էվոլյուցիայի ընթացքում բովանդակությամբ վերափոխվել են, հարմարվել տվյալ ժամանակահատվածի պայմաններին:

1950-ական և հատկապես 1970-80-ական թթ.-ից տարբեր փիլիսոփայական դպրոցների և ուղղությունների դիտակետից սկսում են ձևավորվել տնտեսական քաղաքականության բացատրության նոր մոտեցումներ:

Վերջին տասնամյակներում տնտեսական քաղաքականության շրջանակներում տեղի են ունենում ակտիվ քննարկումներ հատկապես բաշխման հիմնախնդրի շուրջ՝ ձևավորելով դրա բառակապակցությունը և համապատասխան տնտեսական համակարգերի տարբերության մեկնաբանման մոտեցումները: Ընդ որում, այստեղ նույնպես լայն քննադատության է արժանանում կիրառվող տնտեսական քաղաքականության տեսությունների և պրակտիկ փորձի արդյունքների միջև առկա հիմնարար տարբերությունը:

Տնտեսական քաղաքականության այսօրվա մեկնությունների մասին կարող է պատկերացում տալ ստորև բերվող գրականության համառոտ տեսությունը:

Տնտեսական քաղաքականության գերմանական առաջին տեսաբաններից Գ.Իերշը սահմանում է. «Տնտեսական քաղաքականությունը ձգտումների, գործողությունների և միջոցառումների ընդհանրությունն է, որոնք նպատակաուղղված են տնտեսության մեկ ճյուղի կամ ուղղության կարգավորմանը, դրա վրա ազդեցությանը կամ անմիջական որոշակիացմանը»[1]:

Կամ՝ «Տնտեսական քաղաքականությունը նշանակում է հստակ նպատակներին հասնելու համար որոշակի միջոցների փոփոխություն»[2]:

Գերմանացի ժամանակակից հասարակագետ Հերման Աղամը ամբողջացնում է. **տնտեսական քաղաքականությունը** քաղաքական միջոցառումների ամբողջությունն է, որն ազդեցություն է թողնում սահմանափակ ռեսուրսների պայմաններում ապրանքների և ծառայությունների արտադրության ու վերաբաշխման վրա[3]:

Յուրգեն Դոնգեսը և Անդրեաս Ֆրեյտագը նշում են. անհնար է տնտեսական քաղաքականության քննարկման ժամանակ այն չդիտարկել ընդհանուր քաղաքականության համատեքստում, ընդ որում, ինչպես ազգային, այնպես էլ միջազգային[4]:

Ինքը, տնտեսական քաղաքականությունը ամբողջացնում է տեսականը և կիրառականը: Տեսական մասով այն ընդհանուր տնտեսագիտության, իսկ կիրառական մասով՝ քաղաքականության, հասարակագիտության մասն է:

Ներկայիս գերմանական սոցիալական համակարգի բարեփոխող Բերտ Ռուրուպը հստակեցնում է տնտեսագիտության և քաղաքականության տեղը ընդհանուր հասարակական գիտությունների համակարգում, իսկ Հանս Ռուդոլֆ Պետերսը զարգացնում է այն և տնտեսագիտության ու քաղաքականության միասնականությունը ներկայացնում գծապատկեր 1-ի միջոցով[5]:



Գծապատկեր 1. Տնտեսական քաղաքականության միասնական գծապատկերը ըստ Պետերսի

---

[1] Giersch .H., Allgemeine Wirtschaftspolitik: Grundlagen, Wisbaden, 1961.
[2] Tinbergen J. Wirtschaftspolitik. Freiburg. 1968.
[3] Hermann A.,Wirtschaftspolitik und Regierungssystem der Bundesrepublik Deutschland : eine Einführung:-Opladen: Leske + Budrich, 1995. s.16-19.
[4] Donges J., Freytad A. Allgemeine Wirtschaftspolitik: Lucius und Lucius, 2001. s.1-11.
[5] Peters Hans-Rudolf. Wirtschaftspolitik: Munchen, Wien, 2000. s.3-13, Rurup Bert, Wirtschaftslexikon.

Հստակ է քաղաքականության տնտեսականացումը և հակառակը: Արդյունքում՝ ձևավորվող տնտեսական քաղաքականությունը իր ուրույն և կարևորագույն դերակատարությունն ունի հիմնական քաղաքական որոշումներում՝ հատկապես ազգային անվտանգության, բնապահպանության, կրթության և հասարակության համար խիստ կարևոր այլ ոլորտներում: Փայլուն օրինակ է Եվրոպական Միությունը: Վերջինիս էվոլյուցիոն կայացման և ընդլայնման որոշումների քաղաքական նպատակներն են. Եվրոպայում ընդհանուր խաղաղության հաստատում, անվտանգության ապահովում, շրջակա միջավայրի պահպանման գլոբալ հիմնախնդիրների համատեղ լուծում, կրթական նոր համակարգերի կիրառում և ինտեգրում և այլն: Սակայն քաղաքական ինտեգրացիան անհնար է տարանջատել սոցիալ-տնտեսականից: Ձևավորված կարգավորման սկզբունքները ազատ մրցակցային դաշտի ստեղծման, ձեռնարկատիրության ձևավորման ու զարգացման ուղղություններով, ինչպես նաև կառուցվածքային, արտաքին տնտեսական, շուկայի կարգավորման, ֆինանսավարկային, ագրարային և այլ քաղաքականությունների կիրառումը հետևում կամ նախորդում են տարբեր քաղաքական քննարկումներին և որոշումներին:

Կամ՝ համաշխարհային համայնքի կամ մի քանի երկրների կողմից այս կամ այն երկրի նկատմամբ կիրառվող տնտեսական շրջափակումներն ու տարբեր արգելափակող միջոցառումները նույնպես քաղաքական որոշումների արդյունք են:

Առկա է նաև հակառակ միտումը: Ձեռնարկությունների կողմից արտաքին միջավայրի աղտոտումը, տնտեսության կայուն զարգացման ապահովումը բնականորեն հանգեցնում են քաղաքական նոր միավորների ձևավորմանը: Այդ է վկայում, այսպես կոչված, կանաչների ակտիվացումը քաղաքական դաշտում, որոնց «ագրեսիվ» քաղաքականության արդյունքում վերջին տասնամյակներում հատկապես եվրոպական տարածքում բնապահպանությունն առաջնային տեղ է գրավում ընդհանուր քաղաքականության մեջ:

Այս համառոտ օրինակները հստակեցնում են քաղաքականության և տնտեսության միասնականությունը: Սակայն, ինչպես նկատում են Դոնգեսը և Ֆրեյտագը. հստակ չէ նաև որևիցե մեկի նախապատվությունը կամ առաջնայնությունը, կամ նույնիսկ դրանց նպատակների կոմպլեմենտարությունն ու բախումնաբանությունը[1]:

Բնական է, որ տնտեսության տարբեր ուղղություններով զարգացման հայեցակարգերը այս կամ այն կերպ ընդգրկված են իշխող և ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների տնտեսական պլատֆորմներում, և հակառակը: Այստեղից հետևում է պետության և կառավարության կարևորագույն դերակատարությունը և պատասխանատվությունը վերը շարադրված հիմնահարցերի նկատմամբ որոշումների ընդունման գործընթացներում: Ընդ որում, քաղաքական ուժի համար կարևորվում է.

- իրեն վերապահել բոլոր որոշումները՝ ի՞նչ պետք է արտադրվի կամ մատուցվի,
- ցանկանու՞մ է նա միայն մի մասով մասնակցել տնտեսական, քաղաքական որոշումների կայացմանը, թե՞ ընդգրկել այլ համախոհ կուսակցություններ,
- կամ, միայն խաղի կանոնները հստակեցնել, իսկ որոշումները իրենք իրենց պատասխանատվությամբ կարող են քաղաքացիներն ընդունել:

Ամեն դեպքում, ո՞րն է տնտեսական քաղաքականության նպատակը, ինչպե՞ս պետք է գնահատվի կիրառվող կամ վարվող տնտեսական քաղաքականության արդյունավետությունը, ինչպիսի՞ մեխանիզմներ են ենթադրվում կիրառելու արդյունավետ տնտեսական քաղաքականություն վարելու համար, ովքե՞ր են դերակատարները, ինչպիսի՞ ուղղություններ են առաջնային՝ ժամանակի տվյալ պահին կամ ապագայի կտրվածքով և այլն:

Հարցերի այս ամբողջության պատասխանները կհստակեցնեն տնտեսական քաղաքականության էությունը, նպատակները և առաքելությունը:

Տնտեսական քաղաքականությանը բնորոշ է կողմնորոշվածությունը դեպի հստակ նպատակների խումբը և դրանց միջև բախումներին համապատասխան լուծումների առաջարկումը: Վերջինս բնական է, քանի որ հակադարձվում են տարբեր նպատակներ և դրանց հասնելուն նպատակաուղղված քաղաքականություններ: Ինչպես, օրինակ, ՀՀ ԿԲ-ի կողմից կիրառվող կայուն գների պահպանման և դրամի արժևորման քաղաքականությունների հակասությունը և տրված գնահատականները:

Սակայն կարևորագույն նպատակը մեկն է՝ հասարակության բոլոր անդամների բարեկեցության բարելավումը: Ադամ Սմիթը առաջիններից է, որ հարցադրում է, թե «ինչպես կարելի է բարձրացնել ժողովրդի ու պետության բարեկեցությունը և հարստությունը»[2]:

Բարեկեցության բարձրացումը նպատակաուղղված է հասարակության ցանկացած տարրին և նշանակում է բոլորի համատեղ մասնակցությունը տնտեսաքաղաքական որոշումների ընդունման գործընթացներին: Ցանկացածն իրավունք ունի պաշտպանելու իր հետաքրքրություններն ու ունեցվածքը և ազդելու հասարակության վերաբերյալ կայացվող ցանկացած որոշման վրա: Ըստ Դոնգեսի, Ֆրեյտագի, Նոիլերի և Նուշլերի՝ սա հատուկ է պլյուրալիստական հասարակությանը և, բնական է, որ հիմնարար խնդիր է մնում ժողովրդավարական սկզբունքներով և ոճով հասարակության տարբեր խմբերի հետաքրքրությունների առաջ քաշումը կամ ներկայացումը և համապատասխան որոշումների ընդունումը:

Առաջինները, նշելով հասարակության բարձր բարեկեցությունը որպես առաջնային և կարևորագույն նպատակ, կարևորում են նաև դրան հասնելու հետևյալ ենթանպատակների անհրաժեշտությունը.

- յուրաքանչյուրի նյութական ազատության բարձրացում: Խոսքը ոչ թե ֆորմալ ազատության մասին է, այլ նյութական անկախության, օրինակ, պետության անտարբերությունը իր քաղաքացիների նկատմամբ:
- յուրաքանչյուրի ապագայի ապահովության, անվտանգության հիմնավորում: Խնդիրը տնտեսական աճի, կենսապայմանների բարելավման հետ զուգահեռ՝ պետության կողմից սոցիալական ինստիտուտների

[1] Donges J., Freytag A. Allgemeine Wirtschaftspolitik: Lucius und Lucius. 2001. s.1-11.
[2] A.Smith., Der Wohlstand der Nationen. Munchen. 1978.

կայացումն է, ամրապնդումը և դրանց դերակատարության կարևորության բարձրացումը[1]:

- յուրաքանչյուրի սոցիալական կարգավիճակի բացարձակ բարձրացում (եկամուտներ, կրթություն, մասնագիտական գործունեության սոցիալական բարձր գնահատական, կոմպետենտություն և հարգանք),
- սոցիալական արդարություն և օրենքի գերակայություն: Այստեղ նկատի է առնվում ազատ մրցակցային դաշտի պայմաններում եկամուտները անհատների միջև ոչ թե ըստ պահանջմունքների, այլ ըստ կատարած աշխատանքի բաշխման սկզբունքը, ինչպես նաև բոլորի համար համահավասար տնտեսական ակտիվ գործունեության պայմանների ապահովումը:
- բարեկեցությունը բերում է շրջակա միջավայրի խստագույնս պահպանման, որն իր հերթին տնտեսական աճի որակական բարելավման խնդիրն է լուծում:

Բավականին հետաքրքիր և ուշագրավ է արևմտյան զարգացած արդյունաբերական երկրների հասարակությունների բարեկեցության բարելավման, զարգացմանը վերաբերող գերմանացի հասարակագետներ Դիտեր Նոհլենի և Ֆրանց Նուշելերի «կախարդական հնգանկյուն» մոդելի ներկայացումը (գծապատկեր 2.)[2]: Համակարգի կենտրոնում տեղավորելով հավասարությունն ու արդարությունը, նրանք, որպես հիմնական տարրեր, շեշտադրում են տնտեսական աճը, աշխատանքը, հասարակության ակտիվ մասնակցությունը տնտեսաքաղաքական կյանքին ու անկախությունը: Մոդելը էապես արտահայտում է այդ երկրների տնտեսական, քաղաքական, սոցիալական և ժողովրդավարական ենթահամակարգերի բարձր աստիճանը: Այն միանշանակ պարզաբանում է նաև հասարակության բարեկեցության բարելավմանն ուղղված քաղաքական, տնտեսական որոշումների ընդունման հիմնախնդիրների լուծումների միջավայրերը:



Գծապատկեր 2. Նոհլեն-Նուշելերի «կախարդական հնգանկյուն» մոդելը

Այլ կերպ՝ կախարդական հնգանկյունը համակարգ է, որտեղ ամեն մի տարր իր ծանրակշիռ դերն ունի ընդհանուր համակարգի դինամիկ կառավարման գործընթացում: Բնական է, որ տնտեսական, քաղաքական դաշտում առանց հասարակության մասնակցության, բոլորի կողմից ակտիվ աշխատանքի, նյութական և ընդհանուր անկախության ու զուգահեռ տնտեսական աճի, անհնար է համակարգի գործունեությունը: Կիսելով վերը նշված հեղինակների կարծիքը՝ միաժամանակ կարևոր ենք դիտում հավասարության, արդարության համակարգող դերը: Այսպես կոչված՝ անցումային երկրների փորձը ցույց է տալիս, որ թեև առկա է տնտեսական աճ, ձևավորված են ժողովրդավարական ինստիտուտներ, առկա է անհատների և ընդհանուր երկրի ֆիզիկական և նյութական անկախություն, այնուամենայնիվ հավասարության և արդարության բացակայությունը արգելակում է հասարակության զարգացումը՝ ի վերջո բարեկեցության բարելավումը:

Տնտեսական քաղաքականության արդյունավետ կառավարումը որոշ գիտնականներ հնարավոր են գտնում մի շարք հիմնախնդիրների լուծման միջոցով:

Օրինակ՝ կարևորվում է քաղաքական դաշտում **խորհրդատուների ինստիտուտի գործունեությունը**[3]: Ընդ որում, հիմնական մոտեցումները երկուսն են.

- կիրառվող տնտեսական քաղաքականության միջոցառումներում պետք է բացահայտվեն տեսականորեն և էմպիրիկ հիմնավորված վերլուծությունները: Կարճատև և երկարատև ազդեցությունների ուսումնասիրումը և միջազգայնացումը անհրաժեշտություն է:
- տնտեսական քաղաքականության ստուգում. արդյոք այն տրամաբանության, նպատակների արդարության և կարգավորման նորմերի շրջանակներու՞մ է, թե՞ առկա են սխալներ և շեղումներ, որոնք իրենց աճով խոչընդոտում են ճիշտ տնտեսական զարգացմանը:

Այս համատեքստում սոցիոլոգներ Կիրխգեսսները, Պոպերսը կարևորում են տնտեսական քաղաքականության ձևավորմանն օժանդակող խորհրդատվության ինստիտուտների նկատմամբ բարձր պահանջների թելադրումը, որը հանգեցնում է գիտական խորհրդատվության հավաստիությանը և քաղաքական ու տնտեսական մտքի նկատմամբ հարգանքի[4]:

---

[1] Հեղինակները դա տեսնում են սոցիալական պետության կարգավորման մեխանիզմների միջոցով՝ համերաշխության(solidarprinzip-կոլեկտիվ ապահովություն) և սուբսիդարության կամ իրավական նորմերի օժանդակ բնութագրային (subsidiaritactsprinzip- անհատական պատասխանատվություն և ինքնապահովում) սկզբունքներով. տես Donges J., Freytad A. Allgemeine Wirtschaftspolitik: Lucius und Lucius, 2001. s.4.

[2] Dieter Nohlen, Franz Nuscheler. Handbuch der Dritten Welt Bd. 2, Bonn: Dietz. 1995

[3] Giersch .H., Allgemeine Wirtschaftspolitik: Grundlagen, Koeln, 1961.

[4] Kirchgessner G., Wirtschaftspolitische Beratung aus der Sicht des kritischen Rationalismus, Karl Popers kritischer Rationalismus, Tuebingen, 1999. s 193-225.

Ֆրեյտագը նախապատվություն է տալիս խորհրդատվության բարձր որակին և այն համարում արտադրության գործընթացի վերջին փուլ՝ տեսական մտքեր, էմպիրիկ ստուգումներ և խորհրդատվություն[1]:

Քննարկման առարկա է նաև քաղաքական իրականության մեջ այս կամ այն հիմնավորված տնտեսական մտքի, գաղափարի կամ կարծիքի հաշվի առնելը՝ տնտեսական գաղափարները պետք է ընդունվե՞ն այս կամ այն քաղաքական ուժի կողմից, թե՞ արհամարհվեն[2]: Այս հակասությունը դեռ 1936-ին հիմնավորում է Ջոն Քեյնսը. տնտեսագետների գաղափարները կվերապրեն քաղաքագետներին[3]: Այսինքն, տեսականորեն հիմնավորված, էմպիրիկ կանխապահոված և որպես գիտելիք՝ ինստիտուցիոնալ իրավիճակին համապատասխան տնտեսական միտքը լավագույն հնարավորությունն ունի ժամանակի ընացքում դառնալու քաղաքական արժեք:

Տնտեսագիտության մեջ մինչ 1980-ականների վերջերը քննարկման խնդիր էր վերլուծություններում, հետազոտություններում աշխարհայացքի, կարծիքի ազատության վերաբերյալ մոտեցումները[4]: Այդ քննարկումները սկիզբ են առել 1930-ականներից, շարունակվել 1950-60-ականներին և հատկապես ակտիվացել 1970-ականներին:

Հիմնականում դրանք երկու տարբեր՝ գիտականորեն հիմնավորված դիրքորոշումներ են: Առաջինը քննադատ ռացիոնալիստներն են՝ Մաքս Վեբեր, Կարլ Պոպերը և ուրշներ, որոնք գիտակցությունը ընդունում են որպես ճանաչողության ու մարդկանց վարքի հիմք, ձգտումների և նպատակաուղղվածության աղբյուր[5]:

Պոպերն իր ավելի ուշ աշխատություններում զարգացրեց գիտական ճանաչողության չափանիշների մշակումը և մուտքագրելով՝ լրացուցիչ չափանիշ հիմնավորեց տեսության գիտականությունը, եթե այն սկզբունքորեն մերժվում է փորձով[6]:

Երկրորդ խումբը կազմում են դիալեկտիկական դիրքորոշումը ներկայացնող Ֆրանկֆուրտյան դպրոցի ներկայացուցիչները՝ Յուրգեն Հեբերմասը, Մաքս Հորկհայմերը, Թեոդոր Ադորնոն և ուրիշները: Վերջիններս գտնում են, որ 1960-70-ականների հասարակությունը վերածվել է մոնոլիտ ոչ դասակարգային տոտալիտար համակարգի, որտեղ նրա վերածնունդը, զարգացումը կատարվում է տարբեր սոցիալական խմբերի, համակարգերի, մշակույթների սահմաններում գտնվող, շրջապատից դուրս մարդկանց կամ մարգինալ խմբերի միջոցով[7]: Հեբերմասը նշում է, որ ժամանակակից հասարակությունը սոցիալ-քաղաքական կառուցվածք է, տեխնոկրատ և գոյատևում է տեղեկատվական համակարգերի սխալ ներկայացմամբ և թելադրվող սպառման կուլտի միջոցով[8]:

Նման փիլիսոփայական մոտեցումները հանգեցրել են տնտեսագիտության հասկացության տեսականորեն մեկնաբանման տարանջատմանը՝ դրականի և նորմատիվայինի[9]:

Տնտեսական քաղաքականության տեսությունների իդեալական տարբերակն այն է, երբ տնտեսագետը պարզաբանում է՝ որն է խնդիրը, կանխատեսում այն, նշում ինչ կլինի և ամեն մի իրավիճակի համար ինչպիսի քաղաքական որոշում կարելի է կայացնել՝ և ինչպիսին կլինի տնտեսական հետևանքը: Թե ինչ պետք է անել՝ քաղաքագետների որոշման խնդիրն է: Այս մոտեցումը անվանվում է դրական (positiv) տնտեսագիտություն[10] (օրինակ՝ մակրոէկոնոմիկայում դասականը, քեյնսականությունը, նոր դասականը իր արդյունավետ սպասումներով, նոր քեյնսական տեսությունները): Այն գրականությունում հայտնի է նաև «լինել» հասկացությամբ[11]:

Հակառակ սրան, նորմատիվային (normativ) տնտեսագիտությունը նշում է, թե ինչ պետք է անել և ընկալվում «պետք է լինի» հասկացությամբ: Վերջինիս ալգորիթմը հետևյալն է.

- հիմնախնդրի շրջանակներում նպատակների համակարգի հիմնավորում,
- հիմնավորված, նպատակներին կողմնորոշված գործիքների մեխանիզմների հստակեցում,
- հիմնարար և ընդգրկուն կանխատեսման իրականացում,
- պայմանները, որոնց շրջանակներում պետք է կատարվեն դեպի տնտեսական քաղաքականությունը կողմնորոշված ապագա ցուցումներ, անհրաժեշտ է դասակարգել և անպատաճառ նկատի ունենալ անորոշությունը,
- կանխորոշումները և անձնական կարծիքները ընդգրկվում են որպես սուբյեկտիվ գնահատականներ:

Այս համակարգի իրականացման ընթացքում կարևորվում է տնտեսական քաղաքականությունն իրականացնող սուբյեկտների ակնկալումներն ու սպասումները կանխատեսման համակարգի միջոցով: Այդ համակարգում ամերիկացի գիտնականներ Մուտն ու Շեֆրինը տնտեսական սուբյեկտների սպասումները և ակնկալումները տարանջատում են ռացիոնալի, ադապտիվայինի և ստատիկի[12]: Առաջինի դեպքում ապագա ամբողջ տեղեկատվությունը, տեսական մոդելավորման մոտեցումները և այլն քննարկվում և վերլուծվում են մանրամասնորեն: Ադապտիվայինի ժամանակ տնտեսական սուբյեկտները վերցնում են նախորդ ժամանակահատվածներում եղած փորձն ու տեսական գիտելիքները: Եվ վերջապես, երրորդ դեպքում դրանք տարրական արտարկումներն են:

---

[1] Freytag A. Ueberwindung des Reformstaus durch Verbesserung der Politikberatung? Baden-Baden, 1998. s.348-360
[2] Donges J., Freytad A. Allgemeine Wirtschaftspolitik: Lucius und Lucius, 2001. s.25-26.
[3] Keyns J. The General Theory of Employment, Interest and Money. London. 1936.
[4] Donges J., Freytad A. Allgemeine Wirtschaftspolitik: Lucius und Lucius, 2001. s.30.
[5] Вебер М. Протестантская этика и дух капитализма. — М., 2003.
[6] Поппер К. Логика и рост научного знания. М.:Прогрес, 1983, www.wikepedia.org
[7] Horkheimer M., Adorno T., Dialektik der Aufklaerung, 1969, www.wikepedia.org.
8 Habermas. Jurgen Theorie der Kommunikativen Handelns. Zur Kritik der funktionalistischen Vernunft 2. Bde. 3, durch. AufL Frankfurt am Main: Suhrkamp Verlag, 1985,
[9] Korner H. Theoretische Grundlagen der Wirtschaftspolitik. Koeln. 1977.
[10] Նման ձևակերպում կարելի է նկատել. Donges J., Freytad A. Allgemeine Wirtschaftspolitik: Lucius und Lucius, 2001. s.30-31.
[11] Giersch .H., Allgemeine Wirtschaftspolitik: Grundlagen, Koeln, 1961
[12] Muth J., Rational Expectations and the Theoty of Price Movements, Econometrica, 1961., Sheffrin S. Rational Expectations, Cambrige. 1983.

Բնական է, որ ռացիոնալ ակնկալումների ժամանակ իր ուրույն դերակատարությունն ունի կանխատեսումը: Սակայն անորոշության պայմաններում հեռանկարային կանխատեսումը մնում է քննարկման առարկա: Հետաքրքրական և տրամաբանական է Ռոբերտ Լուկասի մոտեցումը, ըստ որի. էկոնոմետրիկ մոդելի կառուցվածքը իր մեջ ընդգրկում է տնտեսական սուբյեկտի օպտիմալ որոշումը: Վերջինս ժամանակի ընթացքում էականորեն ու պարբերաբար փոփոխվում է՝ հանգեցնելով տնտեսական քաղաքականության փոփոխմանը նույնպես: Եվ բնական է, որ ցանկացած տնտեսական քաղաքականության փոփոխություն հանգեցնում է ընդհանուր մոդելի կառուցվածքի փոփոխմանը[1]:

Գիտականորեն հիմնավորված տեսական տնտեսական քաղաքականությունը վերահաստատվում է պրագմատիկի կամ կիրառականի պրակտիկայում:

Վերջին տասնամյակների տնտեսագիտական գրականությունում կարելի է նկատել տնտեսագիտության տեսությունների տարանջատումը երեք մասի՝ դասակարգող (որոշակիացնող), պարզաբանող և տրամաբանող:

Պարզաբանող տեսությունների խնդիրն է բացատրել իրականությունում առկա ֆենոմենն ու դրա պատճառը և հնարավոր ունիվերսալ հիպոթեզների օգնությամբ բացատրել այն: Վերջիններս պետք է քննարկումների և փորձի արդյունքում հստակեցվեն: Որպեսզի պարզաբանող տեսությունները իրականացնեն իրենց գործառույթները, անհրաժեշտ է վերլուծության առարկայի միջոցով տարանջատել հիմնական հասկացություններն ու կառուցվածքային բաժանումները և հստակեցնել ուսումնասիրման տարբեր տեսանկյունները:

Այսպիսի անցումը կամ ալգորիթմը միավորվում է նախորդը դասակարգող կամ որոշակիացնող տեսությունների հետ: Վերջիններս ձևավորում են տեղեկատվության ժամանակահատվածը, նախագծում նպատակային սխեման և պարբերաբար ներկայացնում տնտեսագիտական վերլուծության գործիքները՝ իրենց համապատասխան իրականացման սկզբունքներով:

Տրամաբանական որոշումների տեսությունները աջակցում են պարզաբանող տեսություններին վերլուծության օբյեկտի իրական գործոնների և դրանց միջև փոխադարձ կապի հետազոտման նպատակով: Օբյեկտի գործունեության և միջավայրի հետ նրա արդյունավետ փոխհարաբերության վերաբերյալ հիպոթեզների օգնությամբ մոդելային համակարգերի միջոցով բացահայտվում են վարքի ու դրա փոփոխությունների տրամաբանական հետևանքները:

Հստակ է, որ տնտեսական քաղաքականություն մշակելիս կամ իրականացնելիս այս երեք ուղղություններն էլ հանդես են գալիս միասնական և կարևորագույն դերակատարություն ունեն:

Տեսական տնտեսական քաղաքականությունում առկա են նաև գիտական առարկաների զարգացման հետևանքով հանդես եկող ինչպես էնդոգեն գործառույթներ, այնպես էլ արտաքին՝ հատկապես վարվող, կիրառվող տնտեսական քաղաքականությամբ առաջ եկող էքզոգեն հիմնախնդիրներ:

Այսպիսով, տնտեսական քաղաքականության տեսական մասը կիրառականին կարող է օգնել՝ արդյունավետ և նպատակները կողմնորոշված քաղաքականություն ձևավորելիս, եթե.

- առկա է իրականությանը համապատասխան իրավիճակային վերլուծություն, ինչպես նաև բացահայտվել են տնտեսական հիմնախնդիրները, և կանխատեսելի են հնարավորները,
- բացահայտվել են ոչ տեսանելի նպատակները (խմբերի հետաքրքրություններ, քաղաքական նպատակներ),
- ի հայտ են բերվել նպատակների հակադրությունը տնտեսական քաղաքականության ներսում կամ կոնֆլիկտայնությունը ընդհանուր հասարակության քաղաքականության նպատակների հետ,
- ձևավորվել է միասնական առարկայական գործիքներ և մեխանիզմներ,
- ստեղծվել է կոորդինացիոն մեխանիզմներ և ընդգծված են աջակցող հաղորդակցման միջոցները,
- վերահսկվել է մեխանիզմների, գործիքների կայուն միասնական համակարգը, և բացահայտվել է համակարգի շեղումների հնարավոր աստիճանը՝ ըստ համապատասխան գործիքների,
- մշակվել են տնտեսական-քաղաքական միջոցների համար օպտիմալ և ըստ ճիշտ ժամանակահատվածի ազդեցության գործնականորեն կիրառելի չափանիշներ,
- հստակեցվել է այլընտրանքային տնտեսական միջոցառումների համակարգում ջանք-շահ կամ ծախս-օգուտ համեմատությունը,
- իրականացվել է տնտեսական քաղաքականության հայեցակարգի և կիրառվող տնտեսական քաղաքականության միջև համեմատում, և շեղումների դեպքում կիրառվող քաղաքականությունը բերվել է համատեղության տնտեսական քաղաքականության իրականությանը:

Տնտեսական քաղաքականության տեսությունների համար խնդիր է նաև անհատների համար տեսականորեն հիմնավորված և էմպիրիկ քննարկված պատճառը (միկրոհարթություն) դեպի տնտեսական քաղաքականություն (մակրոհարթություն) տեղափոխելը: Սամուելսոնը և Նորդհաուզի այն անվանում են «սխալ տեղափոխում» (fallacy of comosition)[2]: Խաղերի տեսությունում տնտեսագետները հակված են այս սխալմունքը կրկնելու, երբ որպես խաղացողներ են վերցնում հասարակությունն ու պետությունը: Խոսքը նրանումն է, որ կառավարությունը ձևավորում է ռազմավարություն, որի իրականացումը կարող է չընդգրկել լայն հասարության հետաքրքրությունները:

Եվ վերջապես, կոնկրետ տնտեսական քաղաքականության հարցադրումներին պետք է փաստերով պատասխանել: Տնտեսական քաղաքականությունը տալիս է այս հարցերի պատասխանը և դրա համար էլ առկա են տարբեր՝ կարգավորման, գործազրկության, սղաճի, տնտեսական աճի, արտաքին տնտեսական կապերի, փոխանակության և այլ տեսություններ: Սակայն անհրաժեշտություն է տնտեսական քաղաքակա-

---

[1] Lukas R., econometric Policy Evaluation: A Critique, Journal of Monetary Economics, Suppl.1., 1977.
[2] Samuelson P., Nordhaus W. Economics., Singapur. 1985. s.8.

նության վերլուծման ժամանակ այդ տեսությունների «դետալացումը»: Ընդ որում, հիփոթեզներ, որոնք սկզբունքորեն քննարկման ենթակա չեն, և հիպոթեզներ, որոնք կարող են քննարկվել[1]:

Ներկայիս եվրոպական տնտեսական քաղաքականության ընկալման և քննարկման օբյեկտներն են, տնտեսության կարգավորումը, դրա կառուցվածքը և ընդհանուր տնտեսական գործընթացները, որոնք իրականացվում են համապատասխան քաղաքականություններով՝ կարգավորման, կառուցվածքային և կոնյունկտուրային:

Պետերսը իր հերթին տնտեսական քաղաքականության ձևեր է նշում տեսականն ու վարվողը, ընդ որում, վերջինս բաժանելով կիրառականի և պրագմատիկի:

Սակայն վարվող տնտեսական քաղաքականության փորձը ցույց է տվել, որ այն կարելի է բաժանել նաև ազատ և կանոնակարգված տնտեսական քաղաքականությունների, ինչը նույն Պետերսը վերահաստատում է իր ավելի ուշ հրատարակությունում[2]:

Առաջինի առավելությունն է արագ և հիմնախնդիրը կողմնորոշված որոշումների կայացումը: Սակայն առկա է նաև մտահոգությունը՝ դրա հետևանքով առաջացող այլ հիմնախնդիրների առաջացումը և դրանց բարդությունը:

Բնական է, որ կանոնակարգված տնտեսական քաղաքականության պարագայում առավելություններն ավելին են: Սակայն չպետք է մոռանալ նաև որոշակի պայմանների հետևանքով ազատ տնտեսական քաղաքականության «պարտադրված» ընդունումը կամ երկուսի միասնական կիրառումը:

Հարկ է նկատել, որ սկսած 1960-70-ականներից և առավելապես 90-ականներին տնտեսագիտական գրականությունում հստակեցվում է տնտեսական քաղաքականության տարանջատումը երկու մասի:

Գերմանացի տնտեսագետ Հերբերտ Գիերշը նկատում է. տնտեսական քաղաքականությունը իր բովանդակությամբ մշակույթ է՝ կարգավորման և գործընթացային հարթություններով[3]: Կարգավորման հարթությունում ձևավորվում են մարդկանց գործունեության պայմանների կանոններն ու նորմերը: Վերջինիս համապատասխանում է կարգավորման քաղաքականությունը: Որոշ գիտնականներ նորմատիվային տնտեսագիտության տեսակետից (պետք է լինի) դեռ քննարկում են, իրականության հետ գործունեության օպտիմալ սահմանների կամ պայմանների համապատասխանության հարցը[4]:

Գործընթացային հարթության կարևորությունն է տնտեսական գործընթացի բերվող արդյունքների (պետք է լինի) համեմատումը իրականության (լինել) հետ:

1990-ականների վերջերին Ստեփան Վոյգտը ամբողջացնում է և փորձում տնտեսական քաղաքականությունը որպես մշակույթ շրջանակներում ապրոքսիմացնելու «պետք է լինի» և «լինել» հասկացությունները՝ հաստատելով նախորդների տարանջատումը:

Աղյուսակ 1.

«Պետք է լինի» և «լինել» վերլուծությունները տնտեսական քաղաքականությունը որպես մշակույթ տեսանկյունից ըստ Վոյգտի[5]

	Նորմատիվային վերլուծություն (պետք է լինի)	Դրական վերլուծություն (լինել)	Տնտեսական քաղաքականությունը որպես մշակույթ
Կարգավորման հարթություն	Կարգավորման տնտեսագիտություն	Միջազգային կարգավորում Պետական համակարգի անկայունության կարգավորում	Տնտեսական կարգավորման քաղաքականություն Առաջարկի քաղաքականություն Ռեֆորմների տնտեսագիտություն
Գործընթացային հարթություն	Արտադրության օպտիմալ արդյունավետության հաղթահարման տեսություն	Շուկայի տատանումների կարգավորում	Գործընթացային քաղաքականություն (կառուցվածքային) Պահանջարկի քաղաքականություն

Վոյգտի համակարգը միասնականացնում է գիտնականների վերջին ժամանակահատվածի գնահատականները և մոտեցումները:

Վերլուծությունից կարելի է եզրակացնել. տնտեսական քաղաքականությունն իրականացվում է, երբ՝

1. շուկան ոչ լիարժեք է և առկա է կարգավորման անհրաժեշտություն, որն իր հերթին տեղի է ունենում, երբ՝
- միջավայրի պայմանները և տվյալները չեն համապատասխանում (օրինակ՝ մասնավոր սեփականության իրավունքը) և կիրառելի է կարգավորման քաղաքականությունը (բնապահպանության քաղաքականության որոշ մասը նույնպես),

---

[1] Վերջինս գրականությունում անվանում են նաև Պոպերի չափանիշներ., տես. Kirchgessner G., Wwirtschaftspolitische Beratung aus der Sicht des kritischen Rationalismus, Karl Popers kritischer Rationalismus, Tuebingen, 1999. s 193-225.

[2] Peters Hans-Rudolf. Wirtschaftssystemtheorie und Allgemeine Ordnungspolitik, Oldenbourg, 2002.

[3] Giersch .H., Allgemeine Wirtschaftspolitik: Grundlagen, Koeln, 1961. s.27.

[4] Peters Hans-Rudolf. Wirtschaftssystemtheorie und Allgemeine Ordnungspolitik, Oldenbourg, 2002 Donges J., Freytag A. Allgemeine Wirtschaftspolitik: Lucius und Lucius, 2001. s.30-3.

[5] Voigt S. Die konstitutionelle Ökonomik als Herausforderung für die Theotie der Wirtschaftspolitik-zugleich eine Skizze zur Weiterentwicklung einer ökonomischen Theori der Verfassung, 1996.

- շուկան դանդաղ է շարժվում դեպի հավասարակշռությունը և կիրառելի են կայունության, գործընթացային, կոնյունկտուրային, կառուցվածքային, արտաքին տնտեսական քաղաքականությունները,
2. շուկայի գործունեության արդյունքները ցանկալիից հեռու են (բաշխման քաղաքականություն, սոցիալական քաղաքականություն):

Մեր կարծիքով, արդյունավետ տնտեսական քաղաքականությունը պետք է պարզ և առանց հակասությունների հստակեցնի ընդհանուր հայեցակարգի շրջանակներում իր նպատակներն ու հիմնական կանոնները և ցանկացած միջոցը կողմնորոշի դեպի դրված նպատակների իրականացումը՝ հաշվի առնելով տարաբնույթ պայմանների արդյունքում նպատակների վրա ազդող գործոններն ու գործիքները: Վերջինս էլ հիմնավորվում է տնտեսական քաղաքականության ռազմավարական կառավարման փիլիսոփայությունը:

ԱՐՏԱՎԱԶԴ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, տ.գ.թ, դոցենտ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՇՈՒՐՋ

Շուրջ երկու տասնամյակ է, ինչ ակտիվ քննարկումներ են ընթանում Հայաստանում իրականացվող տնտեսական քաղաքականության, դրա ուղղվածության, նպատակների և կիրառվող գործիքակազմի վերաբերյալ: Ու թեև 2003-2004 թվականներից սկսած առավել մեծ ուշադրություն է հատկացվում բարեփոխումների սոցիալական տեսանկյուն ենթադրող հարցերին, այնուամենայնիվ, ընդհանուր համատեքստից դուրս է մնում գլխավոր նպատակը՝ հասարակության բարեկեցության բարելավումը:

Սմիթի, Ռիկարդոյի, Մարքսի, Վեբերի, Օյկենի, Հայեկի և այլ տնտեսագետների հայեցության մեջ ժողովրդի բարեկեցությունը հոմանիշ է «ընդհանուր բարեկեցություն» հասկացությանը: Այն իր մեջ պարունակել է տարբեր ենթատեքստեր, ընդ որում, առավել փոխկապակցված տնտեսական ազատության հետ:

Ինչպես Ադամ Սմիթի «անտեսանելի ձեռքը», այնպես էլ Վալտեր Օյկենի և Ֆրիդրիխ Հայեկի աշխատություններում նկատելի են տնտեսական ազատության ինստիտուցիոնալ կարգավորման գաղափարները:

Հետռիկարդյան աշխատություններում և հատկապես Կարլ Մարքսի մոտ շեշտվում են բարեկեցության մեկ այլ բաղադրամաս՝ արդարությունն ու հավասարությունը:

Ավելի ուշ, Վիլֆրեդո Պարետոն հասարակական և տնտեսաքաղաքական նպատակների հստակեցման ժամանակ ուշադրություն է հրավիրում մրցակցային հարաբերությունների ազատության գաղափարախոսության վրա:

Արդի տնտեսագիտական միտքը հիմնավորում և խմբավորում է բարեկեցության հասնելու, դրանից բխող նպատակների կողմնորոշվածությունը և պարտադրված համաձայնեցումը դեպի հասարակության հիմնարար արժեքները՝ խաղաղությունը, ազատությունը, ընդհանուր հավասարությունը, անվտանգությունը, ապահովությունը և առաջընթացը[1]:

Հետաքրքրական է Պետերսի «բուրգը», որը հստակեցնում և իրատեսորեն ներկայացնում է տնտեսական քաղաքականության հիմնական, օժանդակ, ենթահամակարգային նպատակները որոշակի հարթություններում և որպես վերջնական նպատակ՝ դասակարգում հասարակության բարեկեցությունը (տես գծապատկեր 1)[2]:

Նույնը շեշտադրում են Դոնգեսը և Ֆրեյթագը՝ բարեկեցությունը դիտելով որպես նպատակների հիերարխիայի ամբողջացում[3]:

Տնտեսաքաղաքական գործիչների պատկերացումներն այն մասին, թե ինչն է քաղաքական տեսանկյունից ցանկալի կամ ինչ չափով այն պետք է լինի, սովորաբար տարբեր են:

Կախված կուսակցական-քաղաքական գունապնակից և կառավարության կազմից՝ այս կամ այն տնտեսաքաղաքական նպատակը, օրինակ տնտեսության աճը կամ կայունությունը, դիտվում է որպես առաջնահերթ: Նպատակների հիերարխիայի գոյության պատճառով միշտ չէ, որ հաջողվում է ստույգ պարզաբանել, թե խոսքը նպատակի՞ մասին է վերաբերում, թե՞ միջոցի. քանի որ նպատակը կրկին կարող է դիտվել որպես միջոց՝ մեկ այլ ավելի բարձր նպատակի համար: Այսպես, տնտեսական քաղաքականության մաս կազմող համարյա թե յուրաքանչյուր նպատակ կարող է դիտարկվել որպես **նպատակների շղթայի մի օղակ**: Հաշվի

---

[1] Տես. Eucken W. Grundsatze der Wirtschaftspolitik. Tubingen. 1968., Giersch .H., Allgemeine Wirtschaftspolitik: Grundlagen, Wisbaden, 1961. Hermann A.,Wirtschaftspolitik und Regierungssystem der Bundesrepublik Deutschland: eine Einführung:- Opladen: Leske + Budrich, 1995. Donges J., Freytad A. Allgemeine Wirtschaftspolitik: Lucius und Lucius, 2001. Peters Hans-Rudolf. Wirtschaftspolitik: Munchen, Wien, 2000, Weimann J. Wirtschaftpolitik: Allokation und kollektiv Entscheidungen, Springer 1996. Korner H. Theoretische Grundlagen der Wirtschaftspolitik. Koeln. 1977. Kirschen E. International vergleicende Wirtschaftspolitik-Versuch eine empirische Grundlegung. berlin 1967. Dieter Nohlen, Franz Nuscheler. Handbuch der Dritten Welt Bd. 2, Bonn: Dietz. 1995. Kirchgessner G., Wirtschaftspolitische Beratung aus der Sicht des kritischen Rationalismus, Karl Popers kritischer Rationalismus, Tuebingen, 1999. Voigt S. Die konstitutionelle Ökonomik als Herausforderung für die Theotie der Wirtschaftspolitik-zugleich eine Skizze zur Weiterentwicklung einer ökonomischen Theori der Verfassung, 1996.

[2] Peters Hans-Rudolf. Wirtschaftspolitik: Munchen, Wien, 2000.

[3] Donges J., Freytad A. Allgemeine Wirtschaftspolitik: Lucius und Lucius, 2001.